

Քայց նկատի առնելու է որ արբանեակ-  
 ները կընան գերի ըլլալ մոլորակի մը,  
 ինչպէս յիշատակեցինք Քազմավէպի մէջ  
 (1917 էջ 388 ա սիւնակ սող 24 և էջ  
 379 ա սիւնակ էջ 19 մինչև յօղուածին  
 վերջը)։ Արդ որքան որ ներկայիս Արու-  
 սեակն և Փայլածուն զուրկ են արբա-  
 նեակներէ, կարելի է օր մը իրենք ալ  
 գերի վարեն թափառաշրջիկներէն մին կամ  
 մի քանին, որով իրենք ալ այն ատեն  
 պիտի սկսին ենթակայ ըլլալ թաւալական  
 շարժման, և մեր առ երևոյթ համարուած  
 օրէնքներն իրականութեան պիտի փո-  
 խուին։

Ինչպէս յիշատակած էի Լուսնթագի Ը  
 և Բ արբանեակաց համար, որ չէ կարելի  
 այնպէս նկատել եթէ ոչ գերի բռնուած  
 Բիւլլայ զոյգ գիտաւորն, վասն զի Լուսն-  
 թագն նախ խորտակեց, ապա պատահե-  
 լով անոնց որոնք իրեն կը մերձենային  
 իր զօրաւոր ձգողական զօրութեան մէջ  
 բռնեց, այսպէս ալ կարող են Փայլածուն  
 և Արուսեակը տկար գիտաւորները՝ որ  
 Արևու և Երկրիս մէջ կը շրջին, որս ընել  
 իրենց։

Հ. ԽՈՐԷՆ ՍԵՆԱՏ

### ԱՌ ՅԵՏԻՆ ԼՈՒՄՍՅՆ

(ԱՅԱՏ ԹԱԳՄԱՆՈՒԹԻՒՆ)

Ով դու Յնացորդ գնում գանձիս  
 Ով դու միակ յոյս իմ վերջին  
 Վա՛հ որ ի մէջ խեղճ քսակիս  
 Դու Յնացիք ես առանձին.  
 Այլ և դու իսկ ո՛հ անհամբեր  
 Գիտեմ ինչ մեկնիլ կ'ուզես.  
 Եւ ոչ իմ ցաւք և ոչ իմ սէր  
 Ո՛հ չեն կարող բռնել ըզբեզ:  
 Զի ահա խեղ անօթութիւն  
 Ճակատագիր հէք քերթողաց  
 Արձանացեալ դիմօք սօզոյն  
 Ըզբեզ ինչ կորզէ անդարձ:  
 Քանիցս ելեալ մտօք յերկին

Մինչ աստեղաց ի լոյս անհուն  
 Թափառէի սիրտ հրճուազին,  
 Յանկարծ անգութն անօթութիւն  
 Գահավժեմալ ի յայն բարձանց  
 Զուս արթնցոց քունչս հեշտին.  
 Եւ բունադին սրաւ իմաց  
 Թէ այնարհիս մէջ գեռ կ'ապրիմ:  
 Ով հէք լուսայդ իմ սիրական  
 Ինչ տի ըլլայ քոյին վիճակ.  
 Շրջիս տի դու թափառական  
 Ի տնանկէ ի մեծատուն  
 յԱռաքինւոյ յայր ամբարիշտ:  
 Մի գուցէ զի մաշած կրծուած  
 Ճակատագիր անագորոյն,  
 Երթաս անշուք և անազգուած  
 Աւարտել կեանքդ ի դրամատուն,  
 Կամ թէ ապուշ մի մեծատան  
 Լեռնակուտակ ոսկիներուն  
 Երթաս կսրտուիս ի յովկիւն,  
 Ով պըտրտիկ լուսայ սիրուն.  
 Գոնէ երբեմն հէք ազգատին  
 Մեկ արտասուք սրբէիր,  
 Իդձ ընդունայն, յոյս սրտտի,  
 Ո՛ր են հիմա սիրտք կարեկիր.  
 Ինչ վըտանգներ քեզ կ'սպասեն  
 Անմեղութեանդ դարանակալ.  
 Եւ ով որչափ քու խղճիդ դէմ  
 Դու տի վարիս պաշտօններ ալ.  
 Յայնժամ սիրտ քո տի վկայէ  
 Թէ առաջին տիրոջ հետ  
 Հեռու միշտ չար ընկերներէ  
 Կ'ապրէիր դու հեշտ ու պարկեշտ:  
 Տ'երթաս պտուկի և լկտաբար  
 Այն անիծեալ սեղանին վրայ  
 Ուր շատ հարուստք սնանկ թշուառ  
 Թողին ամէն յոյս ու ապագայ.  
 Դու մեր վշտերն ու տառապանք  
 Մեր բողոքներն անզթաբար  
 Տի ծաղր առնեն այն ժամանակ  
 Տեսեալ զի դու տիրես յԱշխարհ:  
 Այլ հնչէ ժամա արէտալի  
 Ահա պարզես ըզքո թևեր  
 Ողջ երթ լուսայդ իմ սիրելի  
 Մի մոռանար քո հին ընկեր.  
 Եթէ օր մը վերադառնաս  
 Հէք քերթողիս ի բնակարան  
 Կը խոստանամ գրել անպական  
 Ճամբորդութիւն քո խրատական:  
 (ՀԻՔ ԵՐԿԵՒԵ) ՍԵՆԱՏ